ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ԵՀ46Մ-ԳՀԱՇՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «29» հուլիսի 2019թ.

2019թ-ի հուլիսի 29-ին՝ ժամը 10:00-ին, ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1 նրբանցք, 9 հասցեում՝ «Երևանի հ. 46 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև ՀՈԱԿ) շենքում, տեղի ունեցավ ԵՀ46Մ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Անուշ Սարգսյան	«Երևանի հ. 46 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մեթոդիստ,
Նարինե Գալստյան	«Երևանի հ. 46 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բուժքույր,
Մարգարիտա Սահակյան	«Երևանի հ. 46 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակ,

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Կարեն Մկրտչյանը՝ «Փրոմոուշն» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Անուշ Սարգսյանը, իսկ քարտուղարն էր՝ Կարեն Մկրտչյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՀ46Մ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԵՀ46Մ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՀ46Մ-ԳՀԱՇՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Կ. Մկրտչյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԵՀ46Մ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը քարտուղարի կողմից ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ԵՀ46Մ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած **«ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ**-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Հաստատել ԵՀ46Մ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) **«ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ**՝ բավարար:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ԵՀ46Մ-ԳՀԱՇՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԵՀ46Մ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին** չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել **«ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ**-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Կ. Մկրտչյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սարգսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ն. Գալստյան _____

Մ. Սահակյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Մկրտչյան _____